



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 098-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 15-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
- Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 15  
ք. Արմավիր

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 15-ի թիվ 10 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին  
/Զեկ. Վ. Սարգսյան/
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 144-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին  
/Զեկ. Ա. Հովհաննիսյան/
3. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին  
/Զեկ. Ա. Հովհաննիսյան/
4. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու, կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին  
/Զեկ. Ա. Հովհաննիսյան/
5. Անշարժ գույքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի հաշվեկշռում հաշվառելուն համաձայնություն տալու և Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 31-ի թիվ 063-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին  
/Զեկ. Ա. Հովհաննիսյան/
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին  
/Զեկ. Ա. Հովհաննիսյան/
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին  
/Զեկ. Ա. Հովհաննիսյան/
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 155-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին  
/Զեկ. Ռ. Մանուկյան/
9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 18-ի թիվ 092-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և հողամասի սուբյեկտը փոփոխելու մասին  
/Զեկ. Ա. Աբգարյան/
10. Տեղական վճարի արտոնություններ սահմանելու մասին  
/Զեկ. Ա. Դավթյան/



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 099-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 144-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 144-Ա որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Արմավիր համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

3. Որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐՇԱՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՅԱՆ ՀԵՐԻՔՆԱՋ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 15  
ք. Արմավիր





ՀԱՎԵԼՎԱԾ  
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2025 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ  
15-Ի N 099 -Ա ՈՐՈՇՄԱՆ  
ՀԱՎԵԼՎԱԾ 2  
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
2024 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի  
N 144-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱՎԱՋՄԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Աշխատակիցների քանակը-128

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻ<br>Ն ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ<br>ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ/<br>ՀՀ ԴՐԱՄ/ | ԱՇԽԱՏԱՎԱՐԶԻ<br>ԱՄՍԱԿԱՆ<br>ՖՈՆԴԸ/ՀՀ ԴՐԱՄ |
|-----|-------------------|------------------------|----------------------------------------|-----------------------------------------|
|-----|-------------------|------------------------|----------------------------------------|-----------------------------------------|

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

|   |                                  |          |                  |                  |
|---|----------------------------------|----------|------------------|------------------|
| 1 | Համայնքի ղեկավար                 | 1        | 590 000          | 590 000          |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | 1        | 475 000          | 475 000          |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ        | 2        | 450 000          | 900 000          |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                  | <b>4</b> | <b>1 515 000</b> | <b>1 965 000</b> |

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

|   |                                    |          |                |                  |
|---|------------------------------------|----------|----------------|------------------|
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական       | 1        | 370 000        | 370 000          |
| 5 | Համայնքի ղեկավարի օգնական          | 2        | 258 500        | 517 000          |
| 6 | Համայնքի ղեկավարի տեղակալի օգնական | 1        | 203 500        | 203 500          |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                    | <b>4</b> | <b>832 000</b> | <b>1 090 500</b> |

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

|   |                     |           |                |                  |
|---|---------------------|-----------|----------------|------------------|
| 7 | Վարչական ղեկավարներ | 2         | 350 000        | 700 000          |
| 8 | Վարչական ղեկավարներ | 8         | 330 000        | 2 640 000        |
|   | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>     | <b>10</b> | <b>680 000</b> | <b>3 340 000</b> |

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

|    |                                   |    |         |           |
|----|-----------------------------------|----|---------|-----------|
| 9  | Աշխատակազմի քարտուղար             | 1  | 400 000 | 400 000   |
| 10 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ      | 6  | 203 500 | 1 221 000 |
| 11 | Աշխատակազմի առաջատար մասնագետ     | 23 | 170 500 | 3 921 500 |
| 12 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 2  | 159 500 | 319 000   |

Քարտուղարության, անձնակազմի կառավարման,  
տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

|    |                       |   |         |         |
|----|-----------------------|---|---------|---------|
| 13 | Բաժնի պետ             | 1 | 258 500 | 258 500 |
| 14 | Գլխավոր մասնագետ      | 2 | 203 500 | 407 000 |
| 15 | Առաջատար մասնագետ     | 1 | 170 500 | 170 500 |
| 16 | Առաջին կարգի մասնագետ | 3 | 159 500 | 478 500 |

Ֆինանսատնտեսագիտական բաժին

|    |                        |   |         |         |
|----|------------------------|---|---------|---------|
| 17 | Բաժնի պետ              | 1 | 258 500 | 258 500 |
| 18 | Գլխավոր մասնագետ       | 2 | 203 500 | 407 000 |
| 19 | Առաջին կարգի մասնագետ  | 3 | 159 500 | 478 500 |
| 20 | Երկրորդ կարգի մասնագետ | 1 | 143 000 | 143 000 |

| Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻ<br>Ն ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ<br>ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ/<br>ՀՀ ԴՐԱՄ/ | ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ<br>ԱՄՍԱԿԱՆ<br>ՖՈՆԴԸ/ՀՀ ԴՐԱՄ |
|---|-------------------|------------------------|----------------------------------------|-----------------------------------------|
|---|-------------------|------------------------|----------------------------------------|-----------------------------------------|

### Իրավաբանական բաժին

|    |                         |   |         |         |
|----|-------------------------|---|---------|---------|
| 21 | Բաժնի պետ               | 1 | 258 500 | 258 500 |
| 22 | Գլխավոր մասնագետ        | 1 | 203 500 | 203 500 |
| 23 | Գլխավոր մասնագետ/ՔԿԱԳ/  | 2 | 172 250 | 344 500 |
| 24 | Առաջատար մասնագետ/ՔԿԱԳ/ | 1 | 155 000 | 155 000 |
| 25 | Առաջատար մասնագետ       | 1 | 170 500 | 170 500 |
| 26 | Առաջին կարգի մասնագետ   | 1 | 159 500 | 159 500 |

### Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համադիրությունների աշխատանքների համակարգման բաժին

|    |                       |   |         |         |
|----|-----------------------|---|---------|---------|
| 27 | Բաժնի պետ             | 1 | 258 500 | 258 500 |
| 28 | Գլխավոր մասնագետ      | 1 | 203 500 | 203 500 |
| 29 | Առաջատար մասնագետ     | 3 | 170 500 | 511 500 |
| 30 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 159 500 | 319 000 |

### Դուրսհարկի հաշվառման, սպասարկման և հավաքագրման բաժին

|    |                       |   |         |         |
|----|-----------------------|---|---------|---------|
| 31 | Բաժնի պետ             | 1 | 258 500 | 258 500 |
| 32 | Գլխավոր մասնագետ      | 1 | 203 500 | 203 500 |
| 33 | Առաջատար մասնագետ     | 1 | 170 500 | 170 500 |
| 34 | Առաջին կարգի մասնագետ | 2 | 159 500 | 319 000 |

### Բյուջեային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժին

|    |                       |   |         |         |
|----|-----------------------|---|---------|---------|
| 35 | Բաժնի պետ             | 1 | 258 500 | 258 500 |
| 36 | Գլխավոր մասնագետ      | 2 | 203 500 | 407 000 |
| 37 | Առաջատար մասնագետ     | 2 | 170 500 | 341 000 |
| 38 | Առաջին կարգի մասնագետ | 3 | 159 500 | 478 500 |

### Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժին

|                                         |                       |           |                  |                   |
|-----------------------------------------|-----------------------|-----------|------------------|-------------------|
| 39                                      | Բաժնի պետ             | 1         | 258 500          | 258 500           |
| 40                                      | Գլխավոր մասնագետ      | 2         | 203 500          | 407 000           |
| 41                                      | Առաջատար մասնագետ     | 1         | 170 500          | 170 500           |
| 42                                      | Առաջին կարգի մասնագետ | 1         | 159 500          | 159 500           |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ</b> |                       | <b>78</b> | <b>6 777 250</b> | <b>14 479 000</b> |

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

|                 |                                                          |           |                  |                  |
|-----------------|----------------------------------------------------------|-----------|------------------|------------------|
| 43              | Տնտեսվար                                                 | 1         | 203 500          | 203 500          |
| 44              | Գործավար                                                 | 2         | 159 500          | 319 000          |
| 45              | Վարորդ                                                   | 2         | 192 500          | 385 000          |
| 46              | Պահակ                                                    | 2         | 132 000          | 264 000          |
| 47              | Հավաքարար                                                | 13        | 132 000          | 1 716 000        |
| 48              | Անվտանգության պատասխանատու                               | 1         | 159 500          | 159 500          |
| 49              | Հնոցապան-օպերատոր (սեզոնային՝ նոյեմբերի 1-ից մարտի 31-ը) | 3         | 105 000          | 315 000          |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> |                                                          | <b>24</b> | <b>1 084 000</b> | <b>3 362 000</b> |

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

|                             |             |            |                |                   |
|-----------------------------|-------------|------------|----------------|-------------------|
| 50                          | Անասնաբույժ | 8          | 105 000        | 840 000           |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>             |             | <b>8</b>   | <b>105 000</b> | <b>840 000</b>    |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ</b> |             | <b>128</b> |                | <b>25 076 500</b> |

## Տեղեկանք-հիմնավորում

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի հաստիքացուցակում նախատեսվում են հետևյալ փոփոխությունները՝

Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի աշխատակիցների աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով՝ առաջարկվում է Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնում լրացուցիչ նախատեսել մեկ առաջատար մասնագետի և մեկ գլխավոր մասնագետի հաստիքային միավոր: Նախատեսվող առաջատար մասնագետի պաշտոնը զբաղեցնող համայնքային ծառայողը իրականացնելու է Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի կողմից իրականացվող հետևյալ աշխատանքները՝

- համայնքի վարչական բնակավայրերում հետևելու է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության կանոնների պահպանմանը,
- մասնակցելու է համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապաման իրավունքի և վարձակալության վճարների, օրենքով սահմանված տեղական տուրքերի գանձման աշխատանքների կազմակերպմանը,
- բաժնի պետին է ներկայացնելու տեղական տուրքերից ու վճարներից խուսափող իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տվյալներ,
- մասնակցելու է համայնքի տարածքում սուբվենցիոն ծրագրերով հիմնանորոգված ճանապարհների հարակից մայրերին քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների կողմից բացօթյա և ոչ սահմանված վայրերում առևտրի իրականացման կանոնների պահպանման նկատմամբ տարվող հետևողական աշխատանքներին:

Նախատեսվող գլխավոր մասնագետի պաշտոնը զբաղեցնող համայնքային ծառայողը իրականացնելու է Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի կողմից իրականացվող հետևյալ աշխատանքները՝

- համայնքի վարչական տարածքում իրականացնելու է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, հանրային սննդի կազմակերպման և իրացման, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված

նավթային գազերի վաճառքի և օրենքով սահմանված այլ տուրքերի համար թույլտվությունների տրամադրման օրենքով սահմանված աշխատանքներ,

- մասնակցելու է համայնքի հասարակական տրանսպորտի հետ կապված աշխատանքների, ներհամայնքային երթուղիներ իրականացնող կազմակերպությունների գործունեության համակարգման հետ կապված աշխատանքների կազմակերպմանը,

- իրականացնելու է համայնքի տարածքում սուբվենցիոն ծրագրերով հիմնանորոգված ճանապարհների հարակից մայրերին քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների կողմից բացօթյա և ոչ սահմանված վայրերում առևտրի իրականացման նկատմամբ հսկողություն,

- բաժնի աշխատակիցների հետ իրականացնելու է արտաքին գովազդի տրամադրման դիմում-հայտերի ընդունման, գովազդի թույլտվության համար սահմանված տեղական տուրքերի գանձումն ապահովելու աշխատանքներ:

Միաժամանակ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմում առաջարկվում է նախատեսել ևս մեկ առաջատար մասնագետի հաստիքային միավոր, որը կիրականացնի urban-permits.e-gov.am, permits-backend.e-gov.am, DOCS.E-CADASTRE.AM ծրագրերի մեծածավալ աշխատանքներ, ինչպես նաև քաղաքաշինական բնագավառի գործառույթներ:

Արմավիր համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրումը 2024 թվականին կատարվել է 102,9 %-ով, իսկ 2025 թվականի առաջին կիսամյակում՝ 96,1 %-ով:

Նշված փոփոխություններով աշխատավարձի ֆոնդը կավելանա 544 500 ՀՀ դրամով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 100-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱԿԱՐԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ և 28-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի թիվ 515-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հիմնադրել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. օգոստոսի 15  
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒԴԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱԴԱՐՏԵՋ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:  
Հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքն է՝ ի դեմս համայնքի ավագանու (այսուհետ՝ հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային հաստատության կառավարումն իրականացնող լիազորված մարմին հանդիսանում է Արմավիր համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար):  
Հաստատությունը ստեղծված է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պահից՝ առանց ժամկետային սահմանափակման:
2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն):
3. Հաստատության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Նորավան, 1-ին փողոց, 11/3 հողամաս:
4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Հաստատության անվանումն է՝ 1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2) հայերեն կրճատ՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «Ясли/ детский сад села Нораван Армавирской области Армавирской общины Республики Армения» общинная некоммерческая организация.

4) ռուսերեն կրճատ՝ «Ясли/ детский сад села Нораван Армавирской области Армавирской общины РА » ОНО.

5) անգլերեն լրիվ՝ "Nursery/kindergarten of Noravan village, Armavir community, Armavir region, Republic of Armenia" community non-commercial organization.

6) անգլերեն կրճատ՝ " Nursery/kindergarten of Noravan village, Armavir community, Armavir region, RA " CNCO:

6. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության գինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

7. Հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները հրապարակվում են Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական կայքում՝ armavircity.am:

8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## **II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ**

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:

13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:

18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

- 1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.
- 2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.
- 3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.
- 4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.
- 5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ, իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

### **III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հաստատությունում կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Երեխայի ընդունելությունը հաստատություն իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

24. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

25. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

27. Տարիքային խմբերի ձևավորումը, երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր և ազատ տեղերի համալրումն իրականացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

28. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

29. Հաստատությունն իր գործունեության ուղղություններին համապատասխան մուկ-մանկապարտեզ է՝ 2-6 տարեկանների ընդգրկմամբ: Հաստատությունն աշխատում է շաբաթական հնգօրյա, օրական 9-ժամյա աշխատանքային ռեժիմով:

30. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

31. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

32. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

33. Հաստատության աշխատակիցները հիմնադրի միջոցների հաշվին տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության, իսկ սննդի կառուցահատվածի աշխատողները և սննդի շրջանառության հետ անմիջական շփում ունեցող աշխատակիցները՝ 6 ամիսը մեկ անգամ: Նոր ընդունվող աշխատակիցներն աշխատանքի ընդունվելիս պետք է ներկայացնեն համապատասխան բժշկական զննության փաստաթուղթը:

#### **IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**

34. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը), դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

35. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

36. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

37. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

38. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

39. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

## **V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

40. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն), որը աշխատանքի նշանակվում և ազատվում է օրենքով սահմանված կարգով:

41. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

42. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

#### **43. Հիմնադիրը՝**

1) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

2) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

3) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

4) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

#### **44. Համայնքի ղեկավարը՝**

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

45. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

46. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի նոր ուսումնական տարվան ընդառաջ առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

47. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

48. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

#### 49. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) համայնքի ղեկավարի հետ քննարկելով և համաձայնեցնելով՝ աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է մանկավարժական աշխատողների թափուր տեղի համար մրցույթը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքացուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշչին և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

50. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

#### **51. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝**

1) իրականացնում է ուսումնադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաթինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

#### **52. Դաստիարակը՝**

1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.

2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.

3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

### **53. Երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը)՝**

- 1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.
- 2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

### **54. Տնտեսավարը՝**

- 1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
- 2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
- 3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
- 4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## **VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

55. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

56. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

57. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

58. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

59. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

60. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

61. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

62. Հաստատության շենքը կարող է օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

63. Հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

64. Հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

65. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

66. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

67. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

68. Հաստատության՝ մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

69. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

70. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

71. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱԴԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ

1. Երեխաներ-144, այդ թվում՝ կրտսեր 1-ին - 20
2. Խմբեր-6, այդ թվում՝ կրտսեր 1-ին - 1
3. Աշխատողների քանակը - 31
4. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը                           | Հաստիքային միավորները | 1 միավորի պաշտոնային դրույքաչափը(դրամ)                | Աշխատողների քանակը |
|-----|---------------------------------------------|-----------------------|-------------------------------------------------------|--------------------|
| 1   | Տնօրեն                                      | 1.0                   | 195.000                                               | 1                  |
| 2   | Մեթոդիստ՝ տնօրենի ուս. գծով տեղակալ         | 1.0                   | 135.000                                               | 1                  |
| 3   | Գլխավոր հաշվապահ                            | 1.0                   | 135.000                                               | 1                  |
| 4   | Բուժքույր                                   | 1.0                   | 130.000                                               | 1                  |
| 5   | Տնտեսվար                                    | 1.0                   | 115.000                                               | 1                  |
| 6   | Գործավար                                    | 0.25                  | 115.000                                               | 1                  |
| 6   | Երաժշտության դաստիարակ*(երաժշտական դեկավար) | 1.5                   | I կարգ-122.000<br>II կարգ-120.000<br>III կարգ-118.000 | 2                  |
| 7   | Դաստիարակ*                                  | 7.5                   | I կարգ-122.000<br>II կարգ-120.000<br>III կարգ-118.000 | 6                  |
| 8   | Ֆիզկուլտուրայի հրահանգիչ*                   | 1.0                   | I կարգ-122.000<br>II կարգ-120.000<br>III կարգ-118.000 | 1                  |
| 9   | Դաստիարակի օգնական                          | 6.6                   | 115.000                                               | 6                  |
| 10  | Խոհարար                                     | 1.0                   | 130.000                                               | 1                  |
| 11  | Խոհարարի օգնական                            | 1.0                   | 115.000                                               | 1                  |
| 12  | Փականագործ (էլեկտրամոնտյոր)                 | 1.0                   | 115.000                                               | 1                  |
| 13  | Օժանդակ բանվոր                              | 0.5                   | 115.000                                               | 1                  |
| 14  | Լվացարար                                    | 0.5                   | 115.000                                               | 1                  |
| 15  | Դերձակ                                      | 0.25                  | 115.000                                               | 1                  |
| 16  | Հավաքարար                                   | 1.0                   | 115.000                                               | 2                  |
| 17  | Պահակ                                       | 1.0                   | 115.000                                               | 1                  |
| 18  | Այգեպան                                     | 1.0                   | 115.000                                               | 1                  |
|     | Ընդամենը                                    | 29.1                  |                                                       | 31                 |

Մանկավարժական աշխատողների կարգերի տարբերակման չափանիշները՝

I կարգ՝ բարձրագույն կրթություն և 15 տարուց ավելի մանկավարժական աշխատանքի ստաժ

II կարգ՝ բարձրագույն կրթություն և 1-15 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ կամ միջին մասնագիտական կրթություն և 15 տարուց ավելի մանկավարժական աշխատանքի ստաժ

III կարգ՝ բարձրագույն կրթություն և մինչև 1 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ կամ միջին մասնագիտական կրթություն և մինչև 15 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 101-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՆՋՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ և 28-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի թիվ 515-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հիմնադրել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Կողմ -15

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱՂ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 15  
ք. Արմավիր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՆՁՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՁ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր և (կամ) նախադպրոցական ծառայություններ:

Հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքն է՝ ի դեմս համայնքի ավագանու (այսուհետ՝ հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային հաստատության կառավարումն իրականացնող լիազորված մարմին հանդիսանում է Արմավիր համայնքի ղեկավարը (այսուհետ՝ համայնքի ղեկավար) : Հաստատությունը ստեղծված է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման պահից՝ առանց ժամկետային սահմանափակման:

2.Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Խանջյան, 5-րդ փողոց 9/2:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝ 1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
- 2) հայերեն կրճատ՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խանջյան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ
- 3) ռուսերեն լրիվ՝ «Детский сад села Ханджян Армавирской области Армавирской общины Республики Армения» общинная некоммерческая организация
- 4) ռուսերեն կրճատ՝ «Детский сад села Ханджян Армавирской области Армавирской общины РА » ОНО
- 5) անգլերեն լրիվ՝ "Kindergarten of Khanjyan village, Armavir community, Armavir region, Republic of Armenia" Community non-commercial organization
- 6) անգլերեն կրճատ՝ "Kindergarten of Khanjyan village Armavir community, Armavir region, RA" NPO
6. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:
7. Հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները հրապարակվում են Արմավիրի համայնքապետարանի պաշտոնական կայքում  
armavircity.am:
8. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
9. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
10. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
11. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

12. Հաստատության գործունեության առարկան յուրաքանչյուր սանի կրթության կազմակերպումն է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնելու միջոցով:
13. Հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:
14. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
15. Հաստատությունը, համագործակցելով համայնքի և ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված սաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
16. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, ներառականության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
17. Հաստատությունն իր գործունեությունն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրությամբ:
18. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝
- 1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.
  - 2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.
  - 3) սաների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

4) սաների սննդի կազմակերպումը՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

5) սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ, իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

### **III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

20. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության կրթական ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

21. Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

22. Հաստատությունում կրթությունն իրականացվում է գրական հայերենով՝

«Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Նախադպրոցական կրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

23. Երեխայի ընդունելությունը հաստատություն իրականացվում է ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի)

միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

24. Հաստատության և ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

25. Հաստատության խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

26. Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերում երեխաների հարմարվողականության փուլի առանձնահատկությունները, կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները, բաց թողած ծրագրային ծավալը լրացնելու պայմանները սահմանվում են կրթական ծրագրերով:

27. Տարիքային խմբերի ձևավորումը և երեխաների տեղափոխումն այլ տարիքային խմբեր և ազատ տեղերի համալրումն իրականացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով: 28. Հաստատությունում կարող են ձևավորվել տարատարիք, կրթական տարբեր ծրագրեր յուրացնող երեխաներով ձևավորված խմբեր՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի համաձայն:

29. Հաստատությունն իր գործունեության ուղղություններին համապատասխան մանկապարտեզ է՝

3-6 տարեկանների ընդգրկմամբ.

Հաստատությունն աշխատում է շաբաթական հնգօրյա, օրական 9-ժամյա աշխատանքային ռեժիմով:

30. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը հաստատություն:

31. Սաների սննդի կազմակերպումն իրականացվում է համաձայն առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած համապատասխան ներքին իրավական նորմերի և օրինակելի սննդակազմի:

32. Հաստատության սաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որը տնօրինության հետ պատասխանատվություն է կրում սաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

33. Հաստատության աշխատակիցները հիմնադրի միջոցների հաշվին տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության, իսկ սննդի կառուցահատվածի աշխատողները և սննդի շրջանառության հետ անմիջական շփում ունեցող աշխատակիցները՝ 6 ամիսը մեկ անգամ:

Նոր ընդունվող աշխատակիցներն աշխատանքի ընդունվելիս պետք է ներկայացնեն համապատասխան բժշկական զննության փաստաթուղթը:

#### **IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**

34. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են՝

1) նախադպրոցական տարիքի երեխան.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), դաստիարակը, երաժշտական ղեկավարը (երաժշտության դաստիարակը), դաստիարակի օգնականը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը, ֆիզիկական կուլտուրայի գծով հրահանգիչը, բուժաշխատողը, խմբակի ղեկավարը և այլ մասնագետներ:

35. Սաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

36. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

37. Սանի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, սանի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

38. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

39. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

#### **V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

40. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, համայնքի ղեկավարը, գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն), որը աշխատանքի նշանակվում և ազատվում է օրենքով սահմանված կարգով:

41. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

42. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- 1) հաստատության հիմնադրումը.
- 2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.
- 3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
- 4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.
- 5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.
- 6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
- 7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

#### 43. Հիմնադիրը՝

- 1) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
- 2) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձման համար.
- 3) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը .

#### 44. Համայնքի ղեկավարը

- 1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
- 2) Վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.
- 3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
- 4) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
- 5) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

6) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

45. Հաստատությունում ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական, ծնողական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

46. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի նոր ուսումնական տարվա ընդառաջ առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

47. Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են հաստատության բոլոր մանկավարժական աշխատողները:

48. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

#### 49. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ:

2) նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը:

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր:

5) համայնքի ղեկավարի հետ քննարկելով և համաձայնեցնելով՝ աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր:

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ:

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է մանկավարժական աշխատողների թափուր տեղի համար մրցույթը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքացուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

13) պատասխանատու է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչն և համապատասխան տարիքային խմբի ծրագրերին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, սաների առողջության պահպանման համար:

50. Տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը), իսկ անհնարինության դեպքում՝ 5 տարվա նախադպրոցական մանկավարժական փորձ ունեցող մասնագետը:

#### **51. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝**

1) իրականացնում է ուսումնադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

2) ապահովում և վերահսկում է նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը.

3) պատասխանատու է ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

4) կազմակերպում է հաստատության մեթոդկաբինետի աշխատանքը.

5) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին.

6) կազմակերպում է երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ իրազեկման մասնագիտական աշխատանք ծնողների շրջանում:

## 52. Դաստիարակը՝

- 1) պատասխանատվություն է կրում սաների կյանքի և առողջության պահպանման համար.
- 2) պատասխանատու է սաների համակողմանի զարգացման և դաստիարակության, ինչպես նաև ստեղծագործական երևակայության զարգացման համար.
- 3) մշտապես համագործակցում է սաների ընտանիքի հետ, անհատական խորհրդատվությունների, ծնողական ժողովների, տնային այցերի միջոցով կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

## 53. Երաժշտական ղեկավարը (Երաժշտության դաստիարակը)՝

- 1) նախադպրոցական կրթական ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է սաների երաժշտական դաստիարակությունը.
- 2) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում սաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

## 54. Տնտեսվարը՝

- 1) կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու պահպանությունը.
- 2) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
- 3) հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
- 4) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

55. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
56. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:
57. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
58. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

59. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

60. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

61. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

62. Հաստատության շենքը կարող է օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

63. Հաստատության գույքը կարող է վարձակալությամբ հանձնվել միայն ավագանու որոշմամբ:

64. Հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

65. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

66. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

67. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

68. Հաստատության՝ մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

69. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

71. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԽԱՆՁՅԱՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻ ՔԱՑՈՒՑԱԿԸ  
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Երեխաներ-90, այդ թվում՝
2. Խմբերի քանակը՝ 3
3. Աշխատողների քանակը - 20
4. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Պաշտոնի անվանումը                           | Հաստիքային միավորները | 1 միավորի պաշտոնային դրույքաչափը(դրամ)                | Աշխատողների քանակը |
|-----|---------------------------------------------|-----------------------|-------------------------------------------------------|--------------------|
| 1   | Տնօրեն                                      | 1.0                   | 170.000                                               | 1                  |
| 2   | Մեթոդիստ՝ տնօրենի ուս. գծով տեղակալ         | 0.5                   | 125.000                                               | 1                  |
| 3   | Գլխավոր հաշվապահ                            | 1,0                   | 125.000                                               | 1                  |
| 4   | Բուժքույր                                   | 1.0                   | 115.000                                               | 1                  |
| 5   | Տնտեսվար                                    | 1,0                   | 115.000                                               | 1                  |
| 6   | Երաժշտության դաստիարակ*(երաժշտական ղեկավար) | 0,75                  | I կարգ-122.000<br>II կարգ-120.000<br>III կարգ-118.000 | 1                  |
| 7   | Դաստիարակ*                                  | 3.75                  | I կարգ-122.000<br>II կարգ-120.000<br>III կարգ-118.000 | 3                  |
| 8   | Դաստիարակի օգնական                          | 3,3                   | 115.000                                               | 3                  |
| 9   | Խոհարար                                     | 1.0                   | 115.000                                               | 1                  |
| 10  | Խոհարարի օգնական                            | 0,5                   | 115.000                                               | 1                  |
| 11  | Օժանդակ բանվոր                              | 0.5                   | 115.000                                               | 1                  |
| 12  | Լվացարար                                    | 0.5                   | 115.000                                               | 1                  |
| 13  | Դերձակ                                      | 0.25                  | 115.000                                               | 1                  |
| 14  | Հավաքարար                                   | 1.0                   | 115.000                                               | 1                  |
| 15  | Պահակ                                       | 1.0                   | 115.000                                               | 1                  |
| 16  | Այգեպան                                     | 1.0                   | 115.000                                               | 1                  |
|     | Ընդամենը                                    | 18,05                 |                                                       | 20                 |

Մանկավարժական աշխատողների կարգերի տարբերակման չափանիշները՝

I կարգ՝ բարձրագույն կրթություն և 15 տարուց ավելի մանկավարժական աշխատանքի ստաժ

II կարգ՝ բարձրագույն կրթություն և 1-15 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ կամ միջին մասնագիտական կրթություն և 15 տարուց ավելի մանկավարժական աշխատանքի ստաժ

III կարգ՝ բարձրագույն կրթություն և մինչև 1 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ կամ միջին մասնագիտական կրթություն և մինչև 15 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 102-Ա

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՐՄԱՎԻՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 063-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 31-ի թիվ 1041-Ա որոշումը.

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

- Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 3-րդ փողոց 41/1 հողամաս հասցեում գտնվող, 0,1755 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 04-059-0104-0007 կադաստրային ծածկագրով գույքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի հաշվեկշռում հաշվառելու համար:
- Ուժը կորցրած ճանաչել Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 31-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողատարածքը նվիրաբերությամբ ընդունելուն համաձայնություն տալու և Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից իրականացվող ծրագիրը հաստատելու մասին» թիվ 063-Ա որոշումը:
- Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ 


ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ 

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ 

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ 

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ 

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ 

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ 

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ 

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ 

ՄԿՐՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ 

ՄԿՐՏՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ 

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ 

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 15  
ք. Արմավիր





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 103-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 31-ի թիվ 1067-Ա որոշումը՝

#### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող, Արմավիրի մարզի Արմավիր համայնքի, Մայիսյան գյուղի Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոցի 8 հասցեում գտնվող 0,5774 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության /կադաստրային ծածկագիր՝ 04-043-0964-0001/ և Արմավիրի մարզի Արմավիր համայնքի, Մայիսյան գյուղում գտնվող 10,0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության/ կադաստրային ծածկագիր՝ 04-043-1003-0009/ հողամասերը շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով ուղղակի վաճառքով օտարել «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ներդրումային ծրագրի իրականացման նպատակով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում խոզաբուծարանի հիմնման ներդրումային ծրագրի շրջանակներում հողամասերի ուղղակի վաճառքի ձևով օտարման գործարքի հիմնական պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐՇԱՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. օգոստոսի 15  
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐՁԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՄԱՅԻՍՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԽՈՉԱԲՈՒԾԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՆ ՆԵՐՂՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

|                                                                                                                                                      |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1. Վաճառող                                                                                                                                           | Արմավիրի մարզի Արմավիր համայնք                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          |
| 2. Գնորդ                                                                                                                                             | «ԻԶԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» ՍՊԸ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |
| 3. Առարկան                                                                                                                                           | Խոզաբուծարանի հիմնման համար Արմավիր համայնքի Մայիսյան գյուղում գտնվող 04-043-0964-0001 (հասցե՝ գ. Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փ., 8, սեփականության վկայական՝ 04072024-04-0037) և 04-043-1003-0009 (հասցե՝ գյուղ Մայիսյան, սեփականության վկայական՝ 26062024-04-0045) կադաստրային ծածկագրերով հողամասերի (այսուհետ՝ հողամասեր) ուղղակի վաճառք գնորդին:                                     |
| 4. Պայմանագրի կնքման ժամկետը                                                                                                                         | Խոզաբուծարանի հիմնման ներդրումային ծրագրի իրականացման նպատակով՝ վաճառողը գնորդի հետ կնքում է հողամասերի օտարման պայմանագիր (վաճառողի կողմից հողատարածքի օտարման վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում): Ներդրումային ծրագրի մեկնարկ է համարվում գնորդի կողմից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, անհրաժեշտ շինարարության թույլտվության ստացման ամսաթիվը: |
| 5. Պայմանագրի գինը                                                                                                                                   | Հողամասերը գնորդին կօտարվեն շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, որը կազմում է ընդհանուր 7 625 054 (յոթ միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար հիսունչորս) դրամ:                                                                                                                                                                                                                                      |
| 6. Պայմանագրով հողի սեփականության իրավունքի փոխանցումը                                                                                               | Ներդրողի սեփականության իրավունքը հողամասերի նկատմամբ ծագում է հողամասերի օտարման պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:                                                                                                                                                                                                                                                                 |
| 7. Պայմանագրի կնքման ծախսերը (հատակագծի, հասցեի տրամադրում, պայմանագրի նոտարական վավերացում, պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում և այլն) | Գնորդի հաշվին                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |
| 8. Կողմերի պարտավորությունները                                                                                                                       | 1) վաճառողը պարտավորվում գնորդին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից և փաստացի տիրապետումից ազատ հողամասեր:<br>2) գնորդը պարտավորվում է՝<br>ա. պայմանագիրը կնքելուց հետո մեկամսյա ժամկետում վաճառողին վճարել հողամասերի շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը,                                                                                                                                    |

որը կազմում է 7 625 054 (յոթ միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար հիսունչորս) դրամ, բ. խոզաբուծարանի հիմնումը և ամբողջությամբ շահագործման հանձնելը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ շինարարության թույլտվություն ստանալուց հետո 3 (երեք) տարվա ընթացքում: Եթե 3 (երեք) տարվա ընթացքում ներդրումային ծրագրով նախատեսված կառուցապատումը չի իրականացվում առնվազն 50 (հիսուն) տոկոսի չափով, ապա սահմանվում է տուգանք՝ չկատարված ներդրումների ծավալի 1 (մեկ) տոկոսի չափով: Այն դեպքում, եթե ներդրումային ծրագրի վերջնաժամկետ համարվող 3-րդ (երրորդ) տարվան հաջորդող 1 (մեկ) տարվա ընթացքում ներդրումային ծրագիրը չի կատարվում ամբողջությամբ, ապա վաճառողն իրավունք է ձեռք բերում լուծելու պայմանագիրը, որի արդյունքում կղաղարեցվի գնորդի սեփականության իրավունքը, իսկ եթե հողամասերի տարածքում գնորդի կողմից կատարված լինեն անբաժանելի բարելավումներ (շենք-շինություններ, կոմունիկացիաներ և այլն), ապա դրանք սեփականության իրավունքով անցնում են վաճառողին, որի դիմաց գնորդը չի ստանում որևէ փոխհատուցում,

գ. հողամասերը կարող են օգտագործվել բացառապես սույն որոշմամբ հավանության արժանացած 430 000 000 (չորս հարյուր երեսուն միլիոն) դրամի չափով ներդրումային ծրագրի շրջանակներում՝ խոզաբուծարանի հիմնման նպատակով,

դ. իր կողմից ձեռք բերվող հողամասերը, մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը, օտարել միայն վաճառողի համաձայնությամբ: Հողամասերը նոր գնորդին կարող են օտարվել միայն գնորդի հետ կնքված պայմանագրերով սահմանված պարտավորությունները նոր գնորդի կողմից ստանձնելու դեպքում,

ե. ներդրումային ծրագրի մեկնարկին հաջորդող 3-րդ (երրորդ) տարվա ավարտից հետո եռամսյա ժամկետում վաճառողին ներկայացնել նախորդ տարիների ընթացքում ներդրումային ծրագրի իրականացման վերաբերյալ վերջնական հաշվետվություն: Հաշվետվությունը պետք է հավաստի գնորդի կողմից ներդրումային ծրագրի իրականացման նպատակով արված ծախսերը և կատարված աշխատանքների ծավալները:

#### 9. Կողմերի պատասխանատվությունը

1) կողմերը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար.

2) այն պարագայում, երբ պայմանագիրը կնքելու օրվանից հետո 2 (երկու) տարվա ընթացքում գնորդը չի սկսում օգտագործել հողամասերը նպատակային նշանակությամբ, ապա վաճառողն իրավունք է ձեռք բերում լուծելու պայմանագիրը, որի արդյունքում կղաղարեցվի գնորդի սեփականության իրավունքը.

3) գնորդը պատասխանատվություն է կրում պայմանագրի գնի վճարման ժամկետի խախտման համար, որի դեպքում վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի նկատմամբ կհաշվարկվի տույժ՝ կետանցի օրվանից մինչև պարտավորության կատարման օրը՝ համապատասխան ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների կրկնապատիկի չափով: Վճարման ժամկետն ավելի քան 180 օր ուշացնելու դեպքում վաճառողին իրավունք է վերապահվում լուծելու պայմանագիրը: Մինչև պայմանագրի լուծման պահը գնորդի կողմից վճարված գումարները չեն վերադարձվում:

4) պայմանագրի լուծման և հողամասերը վաճառողին վերադարձվելու դեպքում հողամասերի տարածքում գնորդի կողմից անբաժանելի բարելավումներ կատարված լինելու պարագայում դրանք սեփականության իրավունքով անցնում են վաճառողին, որի դիմաց գնորդը չի ստանում որևէ փոխհատուցում:



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 104-Ա

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հուլիսի 31-ի թիվ 1067-Ա որոշումը՝

#### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականությունը հանդիսացող, Արմավիր համայնքի գյուղ Մայիսյան, Այգեգործական 4-րդ թաղամասի 12-րդ փողոց, 4 հողամաս հասցեում գտնվող 4.5769 հա (կադաստրային ծածկագիր՝ 04-043-1004-0001, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ) մակերեսով հողամասն առանց մրցույթի, վարձակալության իրավունքով «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրելուն՝ ներդրումային ծրագրի իրականացման նպատակով՝ պայմանով, որ վարձակալության իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի մինչև ներդրումային ծրագրի ամբողջ ծավալով իրականացումը:

2.Վարձակալության ժամկետ սահմանել 25 տարի:

3.Արմավիր համայնքի ղեկավարին՝ «ԻՋԵՎԱՆՅԱՆ ԲԵԿՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել 1-ին կետում նշված հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին պայմանագիր:

4.Սահմանել որ.

ա)առաջին հինգ տարվա ընթացքում յուրաքանչյուր տարվա համար մեկ հա մակերեսի վարձակալության վճարը՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:

բ)յուրաքանչյուր հինգ տարին մեկ վարձակալության վճարը ենթակա է վերանայման՝ գործող վարձավճարի 50 %-ի չափով:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -15

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐՇԱՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈԼԻՆՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. օգոստոսի 15  
ք. Արմավիր



Վ. ՍԱՐԳՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 օգոստոսի 2025 թվականի N 105-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 155-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով՝

### ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 155-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Բյուջեի ծախսային մասում՝

ա.01 բաժին 6 խումբ 1 դաս՝ «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի ծախսերի , «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածը պակասեցնել 1000,0 հազար դրամով, «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» 5113 հոդվածը պակասեցնել 1000,0 հազար դրամով

բ.05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում», ծրագրի ծախսերի «Այլ մեքենաներ և սարքավորումներ» 5129 հոդվածն ավելացնել 1000,0 հազար դրամով,

գ.08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակութային կազմակերպություններ», ծրագրի ծախսերի «Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» 4511 հոդվածն ավելացնել 1000,0 հազար դրամով,

2. Փոփոխությունները կատարել համաձայն 1,2,3 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15

Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՇԱՄ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՅԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԴՈՒԽՅԱՆ ՀԱՅԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԽԱԶԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԵՔՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՋՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՄԿՐՏՋՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ

ՆԱԶԱՐՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025թ. օգոստոսի 15

ք. Արմավիր



4. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՏՎԱԾ 2

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱՌԱՅՐԸ՝ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

| որի NN | Բաժին | Խումբ | Ղառ | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները                                           | Ընդամենը<br>(ս.7+ս8) | Վարչական բյուջե | Ֆոնդային բյուջե |
|--------|-------|-------|-----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------|-----------------|-----------------|
| 1      | 3     | 4     | 5   | 6                                                                                                                             | 7                    | 8               | 8               |
